

“Droschak”

ORGANE
de la Fédération
Révol. Arméniens.

ԴՐՈՇԱԿ

Adresse :
Rédaction du “Droschak”
R. F. SUISSE
GENÈVE (Suisse)
LIBRARY

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԶՕՐԵԱՆ

(ԿԱՐՕ)

1871—1897

—o—

էլի մի գո՛ւ...

Ի՞նչ փոյթ սակաջն. զո՞նի առջև միթէ պիտի ընկճէք գուք ընկերներ, Հայաստանի տարաբախտ մայրերին մէկն էլ աւելացաւ հեկեկում է նա որդեկորոյս մայրը, եւ նրա սիրտ կորսաւ հառաչանքներ ի հետ ձեր ողբը եւս հնչում է, ընկերներ թանկագին, անմտաց Արիսի մահն է, որ ողբում էք

Լուցէ՛ք, այդ արցունքները պարծանքով կը լցնեն ձեր սիրտը. այդ մա՛ր նոր կեանք կը տարածէ, նոր սիրտ ու խրատոյս կը ներշնչէ ձեզ. Հաբարութեամբ դիտում էք գուք, թէ ինչպէս ձեր զինուոր-եղբայրները հայրենիքի պատիւը պաշտպանելով, գէնքը ձեռքին դիպաղնարար մեռնում են կարազատ հողի գրկում...

Մեւել է Կարօն Գողթնի Ծղնա գիւղում (Աղուլիսի մօտ) 1871 թւին. Ընտանիքի սիրած ու գուրգուրած այդ զուակը գեռ մանուկ հասակում կամքի ուժ էր ցոյց տալիս. Վճռակալութիւնը, յանգցութիւնն ու անկախութեան կալուածը, նրա բնորոշ գծերն էին Վախն ու փոքրոգութիւնը, վհատութիւնն ու վարանումը օտար էին նրան. Լիակատար ներդաշնակութիւն ենք տեսնում նրա ամբողջ կեանքի մէջ. խօսքը միշտ գործ էր նրա համար

Ահա՛ երիտասարդական աշտուժով լի 26 տարեկան Կարօն է պատկերանում ձեր առջև. Խնամասօրի մտադաշտում, ուր սլանում է նա անդադար մի զիրքից միւսը, ամէնքին քաջալերելով, ամէն տեղ օգնելով նեղն ընկած ընկերներին

Այ՛ո՛, արիւնալից Խնամասօրում այս աներկիւղ երիտասարդը հազարաւոր քրդական գնդակների տակ մարտնչում էր անվեներ, այն միջոցին, երբ ընկերները թախանձողին ինդրում էին նրան թողնել տաւոր դիրքը, երբե՛ք. Կարօյի համար մահացու ամօթ էր նահանջել թշնամու առաջ.

Կաւելու է ելել նա եւ պէտք է կուէ մինչեւ արիւնի վերջին կաթիլը. դիրքը եւ թշնամու քանակութիւնը սարսափելի չէին նրան

Կաւող ու բողբոջ էր Կարօն իր կեանքի ամբողջ ընթացքում. Դուրսն էր լինում նա, թէ դպրոցում, միշտ եւ ամէն տեղ ասպետարար թոյլերին էր պաշտպան հանդիսանում

Միբւած էր նա ընդհանրապէս բոլոր ընկերներից, բայց մանաւանդ տկարներից, Իսկ աւելի զօրաւորների մէջ նա շարժում էր պատկառանքի եւ յաճախ նոյն իսկ երկիւղի զգացմունք. լսիկ Արիսի հետ կատակ անելը հեշտ չէր

Մանկութիւնից սեփականութիւն չէր ճանաչում նա Ընկերների տրամադրութեան տակ էին լինում նրա մանկական խաղալիքները, դասական պարագաները եւ այդպէս մնաց նա մինչեւ կեանքի վախճանը

“Յիշատակ հս ուղում — գրում է ընկերներից մէկը Արիսի եղբորը. չգիտե՛ս միթէ, որ նա սեփականութիւն ունեցող չէր. Իր շինած մօտիկները — ա՛նա՛ քեզ նրանից յիշատակ...”

Գիւղական ուսումնարանից Կարօն անցաւ Զաքարյանի ծխական դպրոցը, այդտեղ աւարտելուց յետոյ, փոխադրեց թիֆլիսի Նիկողայոսեան գրգրոցը, եւ այստեղից էլ մտաւ նոյն քաղաքի բէալականը

Բայց 90 թւականի ցնցումն ու դեւորութիւնը եւ այն չըջանները, ուր հայ երիտասարդութիւնը պատրաստւում էր յեղափոխական գործունէութեան — այդ ամէնը սուսնց հետեւանքի չանցաւ Կարօյի համար. Հայրենիքի անտրգւած պատիւը, ստրուկ եղբոր ազատման միտքը հանգիստ չէին տալիս նրան. Այն բնաւորութիւններից չէր Կարօն, որոնք սահ

մանսփակւում են միմիայն պատմական սիրով հեռից. — ո՛չ. նա ընդունակ չէր անտարբեր ու սառնարիւն կերպով գիտելու արիւնակից եղբայրների տառապանքները. նա չէր համակրած հայրենասիրութեան սոսկ յերացական զգացումով, նա իրական մարդ էր Տեսնում էր նա ոտնակոխ եղած մարդկային ամենատարրական իրաւունքները, հայ ընտանիքի բռնաբարւած պատիւը, տեսնում էր այդ բոլորը եւ իր բոլոր էութեամբ ձգտում էր բողբոջել այդ սնիրաւութիւնների գէժ, պաշտպանել անպաշտպան եղբայրակցին

Անձնական կրթանկութիւնը արիւղ բնականութեան հետ չէին կարող հաշաւել Կարօյի գիտակցութեան մէջ. Միանգամ բնութիւյս նրա մարտեց նա իր անհատական “ես”-ից, թողից ուսումը եւ մտաւ նոր հիմնւած “կող-



ԱՐԻՍՏԱԿԵՍ ԶՕՐԵԱՆ

(ԿԱՐՕ)

կաս՝ արհեստանոցը, ուր մէկ ու կէս տարուամ կատարելազորութեց զինագործութեան մէջ: Այնուհետեւ շուտով անցան Խ. քաղաքը, մտաւ Դաշակցութեան նոր հաստատուած զինագործարանը:

Մանր ու փշոտ էր ճանապարհը, բայց Կարօն հարթեց խողովորտները իր աննկուն բնաւորութեան ուժով, եւ ապահովեց արհեստանոցի գոյութիւնը:

1892 խօլէրայի տարին ընկերները սարսափած փախուստ տւին: Բայց Կարօն մնաց իր մի ընկերով հետ իր գործը շարունակելու. ինքն էլ հիւանդացաւ խօլէրայից, բայց երկաթի կազմածքը փրկեց նրան:

Սօլէրան ամէն ինչ քայքայեց, արհեստանոցը փակւելու վրայ էր, չկար նիւթական միջոց նրան պահպանելու համար. եւ Կարօն հարկադրեց իր ընկերով հետ պտտիլ կովկասեան մի քանի քաղաքներ արհեստանոցի համար նիւթեր եւ նպաստ ձարելու: 1893 թիւը անշարժութեան տարին էր, ընդունելութիւնը սառըն եղաւ ամէն ուրեք: Ոչ մի տեղից օգնութիւն: Յուսահատուած՝ հեռացաւ Կարօյից իր ընկերը, եւ նա մենակ մնաց, բայց հաւատարիմ, ինչպէս միշտ, պարտքի զգացմունքին:

«Այսպէս ենք մի անգամ, մինչեւ վերջ պիտի տաննք» գրում էր նա հիասթափուած ընկերով, վերջին անգամ համոզել փորձելով ու թախանձելով նրան. . . Բայց իզուր. եւ այնուհետեւ գրեթէ ամէն բան ծանրացաւ Արիսի վրայ: Եւ ամէն բան զոհել աչքն առած, արհամարհելով ամէն վտանգ, նա ոստրկանութեան քթին տակ սկսաւ նպասաններ ու նիւթեր, ժողովել, փոխադրել, եւ վերջապէս յաջողացաւ վերականգնել արհեստանոցը, որ անսպաժաք սկսաւ բարգաւաճել այնուհետեւ, Արիսի եւ իր սկսնակ ընկերով անդու աշխատանքի շնորհիւ: Նրա արտադրած հրացանները հարիւրաւոր մարզկանց կեանքը փրկեցին, իսկ իր բաժինն էլ եղաւ մի ցուրտ քրդական զնդակ, որ մի ակնթարթում անողորմաբար խլեց Կարօյին իր սիրած ժողովրդից. . .

1894 թւին Կարօն գրկեց օրինական (լէգալ) կեանքի բարիքներից եւ ստիպուած եղաւ թագնւել: 1895-ին Մօսկուայում օտարի անցադրով քիչ էր մնում, որ ձերբակալէր, բայց ճարպիկ կերպով խաբէց ոստիկանին ու խոյս տուաւ:

Հայրենիք դառնալով նա նորից սկսաւ գործը: 1896 թւի սկիզբներին զբաղւած էր զէնքերի փոխադրութեամբ: Պարսիկները ձերբակալեցին Կարօյին եւ կամեցան հետեւեալ օրն իսկ յանձնել ռուս կառավարութեան: Բայց Կարօն հեշտութեամբ անձնատուր չի լինի: Կէս դիշերին երբ պահապանները ընկզմում են քնի մէջ, Կարօն մի հարածով խորատակում է պատուհանի փեղկը եւ զուրս է թռչում հետն առնելով հրացանն ու կապոցը: Հարայ հրոց է բարձրանում, բայց արդէն ուշ էր, Կարօն հեռացած էր. . .

Նորից երեւաց նա իր սիրած գործի գիմաց, ընկերները շրջանում, նորից ձեռք առաւ մութը եւ սկսաւ տենդային գործունէութիւնը:

Բայց այս անգամ այլեւս ազատ չէր գործում Կարօն իր արհեստանոցում, այլ ստորեկրկնայ ինկուզներով մէջ, թագուն մնալու համար ոստիկանութեան արտօսեալ շքերից:

Գաղտնադրի գործունէութիւնը սկսաւ կռուայ կռուայ ճանձրացնել Կարօյին: Նա մի քանի անգամ փորձ ար

բաւ անցնել սահմանագլուխը եւ մտնել Օսմ. Հայաստան, բայց ընկերները միշտ յորդորում էին նրան, որ մնայ արհեստանոցում, ինկատ առնելով գործի շահերը եւ նրա մոլեգին բնաւորութիւնը:

Չիջանում էր Կարօն: Բայց երբ վերջին արշաւանքն էր ծրագրւում, նա անպայման որոշեց մասնակցել, եւ անսասան մնաց իր որոշման մէջ. ո՛չ մի ուժ, ո՛չ մի ընկերակցան յորդոր չէր կարող այլեւս յետ պահել նրան:

«Մինչեւ օրս ես ուրիշների համար էի հրացան պատրաստում, այժմ ես ինքս պիտի գործածեմ» այսպէս էր առարկում Կարօն:

Եւ նրան վիճակւած էր մեռնել կռի մէջ: Այնտեղ, իմանասօրի հովտում, փայլեց Կարօյի անընկճելի, հերոսական բնաւորութիւնը:

Այդ մարդը, որ այնքա՛ն անողորմ էր բռնաւորների նկատմամբ, որ այնքա՛ն մոլեգնութեամբ մարտնչում էր այն ամէնի դէմ, ինչ որ արդէլք էր լինում հայրենիքի բարօրութեան, այդ մարդը իր երկաթի կրծքի տակ ամփոփում էր մի վերին աստիճանի քնքուշ ու կանացի սիրտ:

Երբ իմանասօրի մէջ տղերքը առաջին անգամ գրոհն աւելիս դէպի քրդական վրանները, Կարօյի առաջին հոգսը կենդանիներն են լինում. արիւնի եւ արհաւիրքների մէջ նա ինքն է անձամբ մօտենում ու ազատում կապտուած հորթերին զնդակների անձրեւից:

* * *

Միջին հասակ ուներ Կարօն, ուժեղ, յաղթանդամ կազմւածք: Երկու սեւ ու խոշոր աչքեր զարդարում էին նրա գունատ դէմքը, լայն ձակատը խելացի կերպարանք էր տալիս նրան, իսկ բարեսիրտ ժպիտը սակաւ էր հեռանում երեսից:

Մանուկ հասակից վարժեցրել էր նա իրեն որսորդական կրտսերին, որ նրա ամէնից սիրած զբաղմունքն էր: Այդ պատճառով Կարօն հեշտութեամբ էր տանում ամէն տեսակ զրկանքներ: Մենք անհուն կենք նրան նոյն իմանասօրի հովտում ռոտով, ծանր բեռը շայակին. բացի ֆէզայու անհրաժեշտ պարագաներից, նա կրում էր նոյնպէս ծանր պայուսակը լի զանազան գործիքներով, որոնց օգնութեամբ շարժւում էր Կարօն ընկերների վնասուած հրացանները, եւ փչացնում թշնամուց զրաւածները:

Ընկերները քանիցս ինդրում էին նրան ձի նստել. կտրակի մերժում էր Կարօն: Լինելով հարիւրապետի օգնական, նա նախընտրում էր ոտով քայլել, խրատուսելու համար զինուոր ընկերներին:

Արշաւանքից առաջ, երբ ներկայացեց ծրագիրը, Կարօն յայտնեց.

«Այո, մենք ձեռնարկում ենք մի շատ վտանգաւոր քայլի. բայց ինչ որ էլ լինի, թէպէտ զոհելու իսկ լինենք մեր ամբողջ ուժը, այժաք է զիմանանք, զիմադրենք մինչեւ վերջին րօպէս եւ կատարենք մի նշանաւոր գործ»:

«Ուր որ գնում էր այդ օրը Կարօն, կատաղի կռիւ էր մղւում այնտեղ» ասում են ընկերները: Աւելի ձիւղկը լինէր ասել նա գնում էր այնտեղ, ուր կռիւը կատաղի էր: Առաջինն էր նա վրամաների վրայ գրոհ առնողների մէջ, եւ այն վերջիններից, որոնք Արաուլի

ստորոտում ուշանում էին, երբ բանակը բարձրացած էր արդէն սարը: Այդ ծանր բազմաթիւ մէջ Սաղաթէ-լի եւ իր ընկերների փրկութիւնը եւ թշնամու կո-րստով փախուստը ամենափառաւոր վկայութիւնն են տայիս Կարօյի անօրինակ քաջութեանն ու անձնկորու-թեանը: «Թշնամու եւ իր արիւնը կարմրացրել էր նրա մեխրադոյն չէր քէղքին եւ քրտինքն ու վառօդի ծու-կը սեւացրել էին նրա երեսն ու ձեռքերը: Չափազանց յոգնած էր, որովհետեւ նա թէ՛ հրամայում էր, թէ՛ կըռ-ւում եւ թէ՛ իրբեւ զինագործ սարքի էր բերում զին-ւորների կուլի մէջ փչացած հրացանները...» ասում է մի ակնաստես: Երբ հարցնում էին թէ ինչպէս է զգում իր թեւը, որ դեռ առաջին յարձակումին վի-րաւորած էր, («ոչինչ») էր պատասխանում, տեսնելով որ դեռ կարող է շարժել ու գործածել: Մինչեւ երե-կոյ անընդհատ կուռում է նա եւ զիշերը, նահանջի մի-ջոցին մնում է իր դիրքում, վճռած լինելով չհեռանալ, մինչեւ չփախցնէր յարձակողներին: Իր ընաւորութեան այդ ընտրոշ կէտը եղբրական մեծութեամբ երեւան է գալիս այդ վայրկենին, աւա՛ղ, իր կեանքի թելը կտրելու...:

Այո՛, պատուով մեռար դու, թանկագին Կարօ, մե-ռար այն մահով, որը արժանի է միայն քեզ նման-ներին: Դու եղէզ չէիր, որ այս ու այն կողմն է ձկուռւմ քամու ամէն մի թեթեւ հարւածից, դու զօ-րաւոր կազմի էիր, որ միայն արմատով է պոկուում:

Դու կատարեցիր կտակը՝ այն էակի, որը քեզնով էր միայն ապրում: մինչեւ վերջին վայրկեանը ակննջ էիր դնում դու ծանօթ ու քաղցր խօսքերին: «Կարօ՛, ան-գին Կարօ... անձդ զո՛հ ցիր Հայրենիքի սուրբ սե-ղանի վրայ, Բարկէն-Սիւնիի նձան լեցւելը թո՛ւնայից վրէժինդրութեամբ, կատարի՛ր վերջին կտակս, գրանով միայն կը նանգատանան ոսկորներս գերեզմանի մէջ: Ես այնքան քաջութիւն ունեցայ, որ կարողացայ կրակի տալ իմ ետեւից բոլոր նաւերը: Այսուհետեւ դու բո-լորովին ազատ ես, գործի՛ր ների՛ր ինձ. բիւր հաճ-բոյններ...»

Ո՛վ ես դու, ընթերցող, մօռայի ազգասէ՛ր, Եթէ այն՝ — խղճալի ես դու. դու Կարօներին չես կարող հաս-կանալ: Բայց գուցէ դու ալեւոր թափառական ես, պանդուխտ, տարազիր, զրկւած քաղցր հողից — միթի-թարի՛ր, Կարօները վրէժինդիր են քեզ համար: Ի՞նչ եթէ երիտասարդ թարմ ուժ ես դու, որը դեռ յե-ղունակ է ստրկութիւնն արհամարհելու եւ ազատութիւնը սիրելու, — դու կերթաս Կարօյի շաւղով: Ականջ դիր նրա ձայնին. նա վրէժ է պահանջում,...

Հ Ի Ի Ա Ն Ի Մ Ա Ր Դ Ը

Թերեւս ուրիշ մըն ալ ըսած ըլլայ — չեմ գիտեր — բայց արգելք մը չէ ատ որ անգամ մըն ալ կըրկ-նւի թէ Թիւրքիան կը նմանի Հինցած հագուստի մը, որուն վրայ անընդհատ բացող ծակերը ստիպւած են կարկտանով գոցելու: Հազիւ մէկ մասը նորեցիր, տես-նես կարկտանի ծանրութիւնը փութացուց ուրիշ մաշ-

ւած կէտի մը բացումը և այսպէս շարունակաբար...

Հելլենական պատերազմէն հազիւ օձիքն ազատած, հազիւ շունչ կ'առնէր հիւանդ զինւորները ճաթերու և պարապ գանձարանը քիչ մը լեցնելու — և ահա վերքերը նորէն կը բացւին Թիւրքիոյ համար: Թէսալիոյ յաղթահան (՝) բանակին այդչափ մօտ կէտի մը, Սը-բանիոյ մէջ խռովութիւնները կը վերսկսին: Դեռ աս-տոնց խօսք չհասկցուցած հեռագիրը լուր կը բերէ Տրիպօլի և շրջակայ գիւղերու մէջ արաբներու ա-աջ բերած ծանր անկարգութիւններու մասին: Ճիշդ այդ միջոցին կը լսուի թէ Բասրայի շրջաբնակ բեդուին ցեղերը նորէն ըմբոստացած են կառավարութեան դէմ: Չմոռնանք որ ասոնք բոլորը միախառնանք են, որոնք ոտք կ'ելլեն խալիֆին դէմ, յունական պարտութեան յաջորդ օրը:

Քիչ ետք, դեռ մօտ օրերս, Մակեդոնիան, Բալքան-ներու այդ Հայաստանը իր բախտով և դիրքով, որ իր դիւանագէտ զաւակներուն անսալով բազուկները ծալ-լած դիտած էր հէլլեններու անհաւասար կուրը իր իսկ պատմական թշնամբին դէմ, այդ Մակեդոնիան է որ կրակսի խըտիլ: Միտփեցնողը այս անգամ ալ թիւրքն է, իր մօնղոլական խօգ-օւթիւնը, որ այնքան տխուր դեր կատարեց այդ հսկայ շէնքին աստիճանա-բար քայքայումին մէջ: Սօփիայի Մակեդոնական Բարձ-րագոյն Գօֆտէն իր վերջին յայտարարութեամբ զ եր ծ կը նկատէ այլևս ինքզինքը ամէն յանձն առու-թեան է բուլղար կամ ուս կառավարութիւններու նկատմամբ, և անոզք կուի թւականը բացւած կը հուշակէ թիւրք բռնապետութեան դէմ, ամէն անգ և ամէն միջոցներով... Եւ արդէն լուրերը կուգան ու կուգան աւերելու զէնքի ու ուսմբի մեծ առաքումներ և մօտալուտ պայթիւն մը Մակեդոնիոյ մէջ...

Իսկ անգին Գրէտէն, որուն դատը ջախջախած ըլլա-լու գօհունակութեամբ ձեռքերը կը շփեր Երլաբէ ձիւաղը, կը կենայ տակաւին նոյնքան սպառնազին, որ-քան առաջ: Ինքնավարութեան բաւական լայն ծրագրի մը հիմնական կէտերն արդէն գծւած հրատարակեցին թերթերը, և այսօր եւրօպացի ընդհանուր նահանգա-պետի մը ընտրութեան վրայ կը ծնայ դժւարութիւնը: Մինչ մէկ կողմէն ծովակալները դարմանել կը ջանան իրենց ուսմբերուն պատճառած մնասները, իրենց զինւոր-ներուն իսկ ձեռքով վերականգնելով այրած գիւղեր — անդին ապստամբ կրէտացին, առանց զգածելու այդ բարեսրտութեանէն, ականջը սնկած, աչքը չորս բացած, ձեռքը հրացանին կըսպասէ... մէկ պայման դնելով խաղաղացման՝ թիւրք զօրքին առմիշտ հեռացումը կըղիւնէ:

Մարդասպանին որկորը հով կուլ տայ թող Կրէտէն ալ չիյնար հոն:

Բայց հանգստանալ վիճակւած չէ այդ Հիւանդ

Մարդու որդնալից մարմնին, Փսուլթեան նշանները մարմնի ճիշդ այն մասին վրայ սկսած են երևիլ, որ դեռ առողջ կը կարծէր, մանաւանդ անոր շուրջը կատարած խարուսներէն ետք: Փարիզի և Լոնդոնի երկու լաւատեղեակ թերթերու թղթակիցներ կը հեռագրեն Պոլսէն թէ «Թիւրքերը կը պատրաստին ընկճելու քիւրդերը, որոնք խիստ ամբարտաւան դարձած են հայկական ջարդերէն ետք: Վանի նահանգին երեք գլխաւոր քիւրդ պետեր, որոնք այն կողմերուն սարսափն էին, ձերբակալուած են 4^{րդ} զօրաբանակի հրամանատար Զէքի փաշայի խնդրանքով և Յրապիզոնի մէջ նաւ դրուած են Պոլիս խրկելու»: Հայկական ջարդերէն ետք, իր տեսակին մէջ երկրորդ դէպքն է ատքիւրդերու նկատմամբ ձեռք առնուած խստութիւններուն: Մեր ընթերցողները մոռցած չեն անշուշտ Բաղէի մտաբանակ մտականցի քիւրդերու նորագոյն ապրտամբուութիւնը, որ թիւրքերուն զիջումովը վերջ գտաւ մայիս ամսուն մէջ:

Որքան բարութիւն Զէքի փաշայի կողմէն. հայերը հարստահարելուն համար ձերբակալել աւեր է այդ ցեղապետները. ատ ընողը այն հրէշն է, որ Շաքիրի հետ 95-ի ջարդերը կազմակերպեց: Եթէ թղթակիցը մեզ հաւատացնել կ'ուզէր այդ այլափոխութիւնը, գոնէ այնքան ալ միամտութիւն չունենար իր հեռագրին կըցելու հետեւեալ տողերը. «Առաջին անգամն է որ համարիչները տուրքի կ'ենթարկին»: Այս խօսքերն ինքնին կ'օգնեն խնդիրը պարզելու:

Ջարդերէն ետքն էր որ կառավարութեան միտքն ինկաւ քիւրդերէն հարկ պահանջելու, և դեռ յետեւելներն ալ միասին: Գանձարանը պարսպ էր, ինչպէս մէշա, պաշտօնէութիւնը անօթի ու ագահ, իսկ հայ գիւղացին — այդ տղրուկներուն դարևոր զոհը — ինքը հացի կարօտ: Բնական էր որ այդ անօթի գայլերուն աչքը դարձաւ դէպի կողոպուտով հարստացած քիւրդը:

Մտականցիք ապտտամբութեամբ պատասխանեցին և չուկին: Հիմա ալ այդ ցեղապետները մերժած են, բայց ծուղակն ինկեր են:

Իժար չէ գուշակել որ հետզհետե պիտի շեշտի քիւրդերու ուժացումը թիւրքերու նկատմամբ, և մերձեցումը դէպի հայ տարրը: Նախ այն պարզ պատճառով որ անօթի թիւրք պաշտօնէութիւնը, ասլուելու համար, անոր պիտի կառչի իր ձանկերով երկրորդ քիւրդը, հայէն յափշտակածը սպառնէն ետք, անօթի պիտի մնայ, անընդունակ ըլլալով յարատև աշխատանքի և երրորդ հակն ընդ ակն»-ի օրէնքը, որ սկսած է թործ դնել հայ գիւղացին իր հարստահարիչներուն դէմ, պիտի հարկադրէ քիւրդը անոր կեանքը, պատիւը և սեփականութիւնը յարգելու:

Եւ Եղլաղի քաղաքականութիւնը, որ հայը իբր ցեղական թշնամի մը ոչնչացնելու կը նկրտէր, իրեն դեմ

պիտի գտնէ, Փորը-Ասիոյ մէջ երկու թշնամիներ, որոնք թերևս մօտիկ ապագային, նոր դաշնակիցներ ալ գտնան վերջին հարած մը տալու այդ խարխուլ շէնքին...

Իսկ այդ միջոցին Ծայրագոյն-Արևելքի մէջ ժառանգութեան խնդիր մը ծագելու վրայ է ուրիշ մեռած մարմնի մը Ձինաստանի շուրջը: Հոն ալ կրակոսին շուտով կատարի մրցումներ, տեղի կ'ունենան դէպքեր, որոնց ձակատագրական ազդեցութիւնը Թիւրքիոյ վրայ դժար է ճշգրտել այժմէն, բայց որոնք կրնան անսպասելի անակնկալներ, լուծումի կերպեր, շահերու նոր զուգութիւններ վերապահել Հիւանդ Մարդու ժառանգութիւնն ալ կարգադրելու:

Ո՛վ գիտէ...

Խ Ա Ն Ա Ս Օ Ր Ի Կ Ո Ւ Ի Ը

Ն Ա Հ Ա Ն Ջ

(ՁԻՄՆՈՐԻ ՅԻՇՄԱՍՆԱՐԱՆԻՑ)

Նահաջն արդէն վճուած էր, բայց մեզանից շատերը վերագոնալ չէին ուզում այդքան շուտ. յափշտակած օրւայ փառաւոր յաղթութիւններով, նրանք երազում էին նոր յարձակումներ:

— Դձաւա, լաւ բան ի, ես ոչ ոքի մտիկ չեմ տայ. քառսուն խքի կաննեմ, կերթամ է՛ն չատրքերաց վրայ, աչքերը վառուած կրկնում էր հարկերապետ Յ.Ն. այն Յ.Ն. որն սկզբում արշաւանքի ծրագրի կատարի հակառակորդն էր, իսկ այդ ժամին չէր մտածում այլևս ո՛չ մեր պաշարի սակաւութեան, ո՛չ թշնամիների հետզհետե զօրեղանալու մասին...

Սակայն նահաջն անհրաժեշտ էր և նա պէտք է սկսէր մեր բռնած դիրքից, ուր կուտակուում էին քիչ քիչ կուկից քաշուողները: Եւ մինչդեռ առանձին դիրքերում դեռ շարունակուում էին նահաջի ձանապարհը պաշտպանող խմբերի կոիւնները, մեր դիրքում ժողովուած տղերքը բացել էին պայուսակները և գաթա ու հալա ուտելով՝ խօսակցում էին իրար հետ:

Խօսակցութեան առարկան իհարկէ օրւայ դէպքն էր: Բացատրում էին կուկի յաջողութեան պատճառները, — յիշեցին նաև չորեքշաբթի գիշերւայ ընկած լուսաւոր աստղի բարեգուշակութիւնը. — հայհոյում էին այն հայերին, որոնք ուզում են «ծառի տակ պանկել բերանը բանալ որ խնձորն ընկնի մէջը»: Ոչ ոք նրանցից չի տեսել մի հայ, որի դձուքին թփանկ էլնի ու 10-20 քրդի ջուխաբ չտայ: Արդար պարծանքով շեշտում էին, որ Շարաֆի հազարաւոր քիւրդ տոհմական թըշ նամիներն անկարող եղան նրան մի քիչ վնաս հասցնելու, մինչդեռ իրենք, իրենց փորք թւով բնաջինջ արին նրա ամբողջ ցեղը: Արհամարհանքով էին խօսում այդ օրն իրենց դիմացը դուրս եկած հազարաւոր քրդերի անցօր և յուսահատական ջանքերի վրայ. ծաղրում էին նրանց հրացանները և լին...

Իրումանը և ես մի առանձին հրճանքով էինք և՛

սուս այդ անկեղծ խօսակցութիւնը, բղխած պարզ դիւզական սրտերից: Ահա մի տարր, կռիւների մէջ եփուած, գնդակների տարափի տակ ամրացած, թշնամու «ուժը» տեղն ու տեղը ճանաչած՝ կը ցրւի ժողովրդի մէջ, իր օրինակով, իր ու թանկագին ընկերների արեամբ ձեռք բերած անխախտ համոզումով կը ցնցի նրան, կըսթափեցնի անթիւ հարածներից շարած գլուխները, իրեն կը քաշի կուր ընդունակներին, աւելի լայն կը բանայ յեղափոխական ուղին...

Մութն արդէն պատել էր, հինգօրական լուսինը ազօտ լուսաւորում էր շրջակայքը, ցրտից մենք կծկւել էինք մի բոլորակ գիրքի մէջ:

— Տղերքը ուշանում են նկատեցի ես:

— Դէ հաղիւ քաշած լինեն դիրքերից, պատասխանեց Գումանը:

Ճիշդ այդ բոպէին լերան մի գագաթից մի գնդակ սուլելով եկաւ և անցաւ ուղիղ մեր գլխի վրայից. յետոյ մի երկրորդը և մի երրորդը:

— Այս ինչ է նշանակում, հարցրի ես:

— Ոչինչ, պատասխանեց Գումանը, երեւի մեր տղերանց քաշելուց յետոյ քրդերը բարձրացել են դիրքերը, որտեղից գնդակ են արձակում:

— Բայց իրենց սովորութեան համեմատ պէտք է արդէն քաշած լինին. քրդերը արեւը մայր մտնելուց յետոյ չեն կուռում:

— Այդ ճիշդ է, բայց այս անգամ սիրտները շատ է դաղւել:

Այս խօսակցութեան մէջ էինք, երբ երեւաց ընդհանուր խմբապետի օգնականը տղերանց և վերաւորների հետ միասին:

— Տղերքը բոլորը եկան, հարցրինք մենք անհամբերութեամբ:

— Ո՛չ, պատասխանեց նա, մի փոքրիկ մասը դեռ յետ է:

— Շատ լաւ, դարձաւ Գումանը օգնականին, դու խումբդ առ և շուտով անհետացիր մթութեան մէջ, իսկ ես այստեղ կը մնամ և կը դիմադրեմ քրդերին:

— Ես էլ կը մնամ, պատասխանեցի ես, և երկուսս հրացաններս քաշած՝ մտանք քարերի ետեւը: Իսկ օգնականը տղերանց և վերաւորներին առնելով՝ շարունակեց իջնել ձորը:

Հետոյ հետէ վրայ հասան տղերքը և ինքը ընդհանուր խմբապետը: Մեզ յայտնեցին, որ բոլորս էլ մաս-մաս հեռանանք առանց կրակ անելու, որպէսզի մթութեան մէջ բոլորովին կորցնենք մեր հետքերը:

Կենտրոնական խումբն արդէն բաւական առաջ էր գնացել նրան յաջողում է ուղիղ ճանապարհով ամենայն ապահովութեամբ տեղ հասնել: Բայց նոյն վիճակին չարժանացանք մենք՝ յետ մնացածներս, թուով մօտ 20 հոգի: Ընդհանուր որոշման համաձայն մենք մաս-մաս բաժանւեցինք: Իւրաքանչիւր մի մասը ամեն տեսակ արկածների է հանդիպել: Քիչ գաղափար տալու համար պատմենք մեր գլխին եկածը:

Ընդհանուր խմբապետը, Գումանը, ես և իմ մի մօտիկ ազգականը միասին ճանապարհ ընկանք, բայց արձակւած գնդակների պատճառով ստիպւած էինք իրարից հեռանալ և մենք շուտով կորցրինք Գումանին, որը յետ էր մնացել մի դէպքի պատճառով, որ պարտք կը համարում յիշատակել այստեղ:

Բաժանւելով մեզանից, Գումանը լսում է մի օգնու-

թեան կոչ և անմիջապէս ճանաչում է իր մտերիմ ընկերոջ ձայնը: Վազելով, Գումանը տեսնում է, որ իր ընկերը վայր է ընկել, անկարող լինելով քայլեր Իսկոյն բարձրացնում է նրան, գտնում մի ձի, նստեցնում և սկսում նրա հետ շարունակել ճանապարհը: Այդ միջոցին մի գնդակ վերաւորում է Գումանի ձախ թուր, բայց նա ոչ մի ուշադրութիւն չի դարձնում վերաւոր թուրի վրայ և, տեսնելով, որ ձին յոգնածութիւնից չի շարժուում, հանում է իր տրեխները, հագնում ընկերոջ (վերջինս կորցրած է լինում իրենը) և կամաց-կամաց թշնամիների միջից առաջ ընթանալով, այդ երկուսը ապահով տեղ են հասնում գլխաւոր խմբի ժամանումից միայն 2 օր յետոյ:

Իսկ մենք երկար ժամանակ միասին գնացինք մինչև լերան ստորոտի ձորը, ուր հանդիպեցինք ուրիշ տղերանց էլ: Այստեղ պէտք է գտնէինք ընդհանուր խումբապետի օգնականին կենտրոնական խմբի հետ. բայց երեւի խումբը խոհեմութիւն չէր համարել կանգ առնել և անցել էր, իսկ մեզանից ոչ ոք ճանապարհը չէր ճանաչում և հեռաւար չէր յանդգնում միաներին առաջնորդ լինելու պատասխանատուութիւնը իր վրայ վերցնել: Ուստի ոմանք բարձրացան ձորի աջ կողմի թմրի վրայ և իջան միւս կողմը, իսկ մենք և մեզ հետ ուրիշ տղերք բռնեցինք ձորի ճանապարհը: Այդ գծով քիչ առաջ գնալուց յետոյ մեզ հետ միացած 6 տղերքն էլ բարձրացան ձորի աջ կողմի թումբը և անցան միւս կողմը: Անցնողները չէին սխալւել, իրենց ճանապարհի վրայ նրանք գտնում են կենտրոնական խումբը:

Մեր ճանապարհը սոսկալի էր, մէկ թզի չափ հարթ տեղ գտնել չէր կարելի: Երբեմն ստիպւած էինք երկու երեք գազ բարձրութիւնից ցած թռչել առանց իմանալու, թէ ինչ կայ մեր տակը: Վարող էր երեւկայել, թէ որքան անտանելի է խոչընդոտներով լի այդպիսի մի ճանապարհ, այն էլ բեռնւած մարդու համար:

Կէս ժամ անցած կը լինէր, ինչ մենք բաժանւել էինք մեր ընկերներից, երբ ձորի աջակողմեան թմրի վերայից լսեցինք հրացանների ձայներ, այդ քրդերն էին: Փամփուշտները ղնելով հրացանների մէջ, մենք երեսի վրայ պառկեցինք գետնի վրայ, աշխատելով չմտնել մեր ներկայութիւնը: Քրդերը շուտով գաղափարեցին հրացանաձգութիւնը, սկսան այս ու այն կողմը պատել սուլել և «տղերք» ձայն տալ: Նրանք գիտէին, որ մենք այդպէս ենք իրար կանչում. դրանով նրանք ուզում էին խաբել յետ մնացածներին, իմանալ նրանց տեղը: Մի ամբողջ ժամ պատելուց յետոյ, քրդերը հեռացան, և մենք բարձրացանք մեր տեղից ու շարունակեցինք գնալ Բայց դէպի ո՛ւր. — մեզանից ոչ ոք չգիտէր: Մենք մի սար էինք ճանաչում, իսկ նա մթութեան մէջ չէր երևում: Սպասել լուսաբացին սարը տեսնելու համար մահ էր նշանակում, որովհետեւ լաւ գիտէինք, որ առաւօտը շատ վաղ քրդերը պիտի լցւէին լերան վրայ, փնտռեին յետ մնացածներին և սպանւածներին կողոպտեին: Պէտք էր անպատճառ գնալ ուղիւթեան համար մեզ օգնեց բեռնափին աստղը, Բռնելով որոշած ուղիւթիւնը, մենք ուղիղ գծով առաջ գնացինք: Մեր ընթացքը շատ էլ խոհեմ չէր. կարող էինք ընկնել քրդերի օբաների մէջ, բայց ի՞նչ արած:

Բարեբախտաբար ոչ ոքի չհանդիպեցինք, բայց յոգ-

եան, հրացանով ու փամփուռներով բեռնաձի, անընդհատ սար բարձրանալ-իջնելով, մենք սաստիկ ծարաւ էինք զգում: Երբ և իցէ այս դրուձեան մէջ եղողը միայն կարող է երևակայել մեր դրուձիւնը: Այս անընդանքների մէջ աւելի քան երեք ժամ գնալուց յետոյ, յանկարծ մի խոտոտ ձորի մէջ լսեցինք բարակ ջրի խոխոջ: Որքան անտանելի էր մեր ծարաւը, նոյնքան մեծ եղաւ մեր ուրախութիւնը: Անբըով խոտերի մէջ գըտանք աղբիւրի աղը և հարկ չկայ ասելու, որ չենայեցինք ոչ մեզ և ոչ աղբիւրին: Զրամանն էլ չցնեցուց յետոյ ճանապարհ ընկանք: Բայց աւանդ մենք փորձառու չէինք, մենք չգիտէինք, որ այդպիսի սոսկալի ծարաւը մի անգամ ջուր խմելով չի անցնում, որ ծարաւը կոտրելու համար անհրաժեշտ է գոնէ մի քառորդ ժամ նստել ջրի մօտ և մի քանի անգամ խմել: Գժախտաբար մենք միայն մի անգամ խմեցինք կուշտ և շարունակեցինք մեր ճանապարհը: Հազիւ քսան րօպէ անցած՝ նորից զգացինք նոյն ծարաւը. իսկ ինչ կարող էր անել փոքրիկ ջրամանը մեզ երեքիս:

Շարունակ բարձրանալով, իջնելով՝ արշալուսին հասանք մի բլրի գագաթ, ուր կային դիրք բռնելու համար քիչ շատ յարմար դիրքեր: Աճուցեցինք մտնել այդ քարերի մէջ, թագնել մինչև մութն ընկնելը և ապա շարունակել մեր ճանապարհը:

Մի քանի քարեր ևս շարելով, ամբարցինք մեր բռնած դիրքերը և իւրաքանչիւրը մեզանից մէկի մէջ մըտնելով, կնկեցինք և քնեցինք: Արևը դեռ նոր էր ծագել երբ մենք աչքներս բացինք և ինչ տեսնենք. — չնայելով որ ամբողջ գիշերը շարունակ քայլել ենք, բայց շնորհիւ այն հանգամանքի, որ հարթ տեղով չենք գնացել այլ սարեր, անդունդներ ենք կտրել, մենք գըտնում ենք այնքան հեռու Արաուլի ստորոտից, որ մի ձիաւոր կէս ժամում կարող է մեզ հասնել:

Արևը մի քանի թիզ բարձրացաւ հորիզոնից թէ չէ, մէկ էլ տեսանք, որ քիւրդ ձիաւորները մըջիւնի պէս լցեցան սարը և սկսան այս ու այն կողմ հրացան արձակել: Մեր առաջին ենթադրութիւնն այն եղաւ, որ մեր տղերանցից անպատճառ մնացած կը լինեն լեռան վըայ, և հիմա կուրը նորոգել է նրանց և քրդերի մէջ: Փամփուռները հրացանների մէջ դնելով, պատրաստուեցինք մենք էլ, բայց մի քանի րօպէ սրտատրոփ ահանջ դնելով, տեսանք որ ոչ մի մօսինի չպատասխանեց մարտիներին: Մեր սիրտը հանգստացաւ. նշանակում է, որ տղերանցից ոչ ոք չկայ, այլ քրդերը դիտմամբ կրակ են անում գէպի այն դիրքերը, որտեղ մենք նախորդ օրը պաշտպանում էինք, որպէսզի նախ քան դիրքերին մօտենալը իմանան, մարդ կայ, թէ ոչ: Ոչ մի պատասխան չստանալով և համոզելով որ մարդ չկայ, սկսան աւելի և աւելի բարձրանալ: Մեր դրուձիւնը մտանգաւոր էր. քրդերը կարող էին ցրիւ գալ տղերանց բռնած ճանապարհով և գտնել մեզ: Այդ գէպը մեր կորուստն անխուսափելի կը լինէր, որովհետեւ մի քանի ժամից աւել դիմադրել չէինք կարող: Մեր փամփուռները շուտով կը սպառուէին: Բացի այդ, մեր շուրջը 20, 50, 100 քայլի վըայ սփռուած էին մեծ քարեր, որ քրդերը մէկը միւսի ետեւից բռնելով, կարող էին առաջ գալ և վերջապէս հասնել մեզ:

Բայց և այնպէս մենք պատրաստ և լարած սպասում էինք կուրն ձիաւորները ամբողջ 3 ժամ լեռան ա-

մէն կողմը պտտելուց յետոյ, հեռացան մեր աչքից: Սպասեցինք մինչև կէսօր. նրանք այլևս չերևացին: Անցաւ մի երեք ժամ էլ — մենք մեզ բոլորովին ապահով զգացինք, որովհետեւ մինչև երեկոյ քիչ էր մընացել, և եթէ թշնամին էլ յայտնէր, մենք վստահ էինք, որ մինչև մութն ընկնելը կարող կը լինենք մեզ պաշտպանել և յետոյ աներևութանալ խաւարի մէջ:

Այդ ժամանակ մենք սկսանք մտածել մեր ճանապարհի վըայ և, օգտւելով մեր բարձր դիրքից, պարզ կերպով նշան արինք ամէն ձոր, ամէն բլուր, որոնցից պէտք է անցնէինք մեզ ծանօթ լեռը հասնելու համար: Ծամը հինգը եղաւ թէ ոչ, մեր վստահութիւնը այնքան շատացաւ, որ առանց սպասելու արևի մայր մտնելուն, մենք դուրս եկանք մեր որջերից և իջանք ձորը ջուր գտնելու նպատակով, որովհետեւ անողոք ծարաւը մեզ տանջել էր ամբողջ օրը: Գիշերն արդէն մեր ծարաւն անտանելի էր. կարող էր երևակայել թէ ինչ էր մեր դրուձիւնը ամբողջ օրը տաք արևի տակ և շրջապատուած տաքացած լերկ քարերով:

Չորի մէջ մենք վերջապէս դտանք փրկարար ջուրը, որի կողքից ամբողջ կէս ժամ չհեռացանք: Այս անգամ աւելի վարպետութեամբ խմեցինք ջրից, այնպէս որ բաւական ժամանակ ծարաւ չէինք զգում:

Կտրելով մեր դժոխային ծարաւը, մենք կարողացանք աւելի արագ քայլել և դեռ կէս գիշեր չեղած՝ հասանք որոշուած լեռը, որտեղից երեկոյեան չեւել էր կենտրոնական խումբը: Ճանապարհին յիշելու արժանի դէպք չպատահեց մեզ. միայն ես համեմատաբար անսովոր լինելով ոտքով ման գալու, ուժասպառ եղայ. բայց իմ բարեկամ Թ.-ն, որ առաջնակարգ քայլող է և ուժեղ կազմածքով մի տղամարդ, վերցրեց իր վըայ իմ փամփուռները, որից յետոյ ես կարողացայ աւելի դիւրութեամբ քայլել: Սարից մինչև մեր երկրորդ իջևանը արդէն ծանօթ լինելով Թ.-ին, մենք նոր դժուարութիւններ չունեցանք և կիւրակի յուլիս 27-ին, առաւօտեան ժամը 8-ին կենտրոնական խմբի ժամանումից 3 ժամ յետոյ բոլորովին ապահով հասանք մի տեղ, ուր կարող էինք մի երկու օր հանգիստ առնել: Ամբողջ 6 օր էր, որ մենք ամէն մի 24 ժամուայ ընթացքում ամէնաշատը մէկ ժամ հաղու էինք քնել ամբողջ 40 ժամ էր, որ ոչ մի բան բերաններս չէինք դրել և այնքան էլ ճանապարհ էինք անցել, այն էլ անդադար լեռներ բարձրանալով, իջնելով: Կարող էք երևակայել թէ որքան քաղցր էր մեզ համար այդ երկու օրուայ հանգիստը, որ առանք երկրորդ իջևանում:

Մեզանից մէկ, երկու օր յետոյ միմեանց ետեւից խումբ-խումբ հասան այն բոլոր տղերքը, որոնք մեզ նըման յետ էին մնացել: Մեր ուրախութիւնը մեծ էր և գրկախառնութիւնը ջերմ, երբ իրար հանդիպում էինք, իւրաքանչիւրը մեզանից միւսին բոլորովին կորած էր համարում:

Այս ընդհանուր ուրախութիւնը նսեմանում էր սակայն խորին հառաչանքով, որ դուրս էր թռչում ամէն մէկի սրտի խորքից, երբ տրուում էին մեր նահատակ ընկերների անմուանալի անունները:

Ն Ա Մ Ա Կ Թ Ի Ի Ր Գ Պ Ա Ր Ս Կ Ա Կ Ա Ն Ս Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ն Է Ն

7 դեկ. 97

Վերջերս տարածած լուրերը Պարսկաստանի մէջ հայոց կրած նեղութիւններու մասին չափազանցած են: Սալմաստը քիւրդերու կողմէն ոչ մի հալածանք չը կրեց: Պատմած խտուրթիւնները կառավարութեան կողմէն չէր, այլ մասնաւոր պաշտօնեաներու, ինչպէս այնտեղի գաւառապետը, որ բաւական կաշառք էր կերած: Բայց քիչ ետք Ատրպատականի ընդհանուր նահանգապետը Թաւրիզ բերել տւաւ զինքը և կաշառք առած զրամները խելով անկէ, Սալմաստի հայերուն ետ տաւ, ու զեռ խիստ պատժի ալ ենթարկեց: Իսկ Խոյի մօտ քիւրդերը յարձակեցան Ֆիայն Առ գիւղի վրայ, անխտիր կոտորելով թէ պարսիկ և թէ հայ:

Վերջին ատեններս պարսից կառավարութիւնն սկսաւ աւելի հաշտ աչքով նայել հայոց վրայ և ատոր իբր ապացոյց կրնայ համարուիլ շահի վերջին հեռագիրը, ուղղած Ատրպատականի նահանգապետին Էնոագրին իմաստը մօտաւորապէս այսպէս էր.

«Չըջին ղէպերու առթիւ Թիւրքիոյ ըրած պահանջները պարզ ցոյց տւին, որ Թիւրք կառավարութիւնը կը ձգտի նոյն դրութիւնն ստեղծել Պարսկաստանի մէջ հայոց համար, ինչ որ Թիւրքիոյ մէջ: Ուստի կը հրամայեմ, որ ամէն կերպով պաշտպանէք հայերը ու խիստ պատժի ենթարկէք Սալմաստի գաւառապետը, որու յեմարութեան շնորհիւ այնտեղի հայերը վերջերս շատ վշտացած են»:

Թիւրք կառավարութիւնը մեծ պատրաստութիւններ կը տեսնէ պարսկական սահմանադրին վրայ: Կը լսի թէ վերջապէս մերժած է ո՞ր և է հատուցում ընել Պարսկաստանին այն աւերի ու կողոպուտներու համար, որ իր հպատակ քիւրդերը գործած էին Խոյի նահանգին մէջ իրենց վերջին ասպատակութեան ատեն:

Պարսիկ կառավարութեան կողմէն Թիւրքերուն յանձնուած օսմանեան հպատակ քանի մը հայ գաղթականները, որոնք Խանասորի կռիւն մասնակցողներ կը կարծուէին, Բաշկալէի մէջ Թիւրք իշխանութիւններու կողմէ ճանչցած են իրբւ անմեղ մարդիկ և ազատ աքաղաղուած, երեք հօգիտ դատ, որոնց վրայ ալ միայն թեթեւ կասկածներ կը ծանրանան:

Մ Ա Մ Ա Ր Ի Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Agence Hava: -ը կը հնազդէ ղեկաւորներ 15-ին թէ Մարդասպանին խորհրդականները արգելած են հրատարակումը Օրմանանի մէկ շրջաբերականին, որով Էշէքեանի փառքին նախանորդը «հրութիւն ու հաւատարմութիւն» կը քարոզէր իր «հօտ»-ին: Եթէ Օրման-նանը կը մոռնայ որ հայ ժողովուրդը շատոց իր «հօտ»-ութեան վիճակէն ելած է և անտառին քերած ամէն գերան իրեն չ'ընդունի, միւս կողմէն Թիւրքերը այնչափ խելոցած են հիմա, որ հասկցան թէ այդ տեսակ շրջաբերականներն ունին իրենց ժխտական միտքն ալ կտուր երեսը, որ ժողովուրդը ամէնէն առաջ կը կարգայ և միտքը կը պահէ: Նախ «հաւատարիմ» երբ «-ին են կայսերական շնորհներուն առջև կտոր հարցական մը կը դնէ, Արմաշի վանահօր տեսութիւններուն հանդէս՝ իրականութիւնը գծելով: Երկրորդ՝ երբ պղպիսի շրջաբերական մը կ'ուղղէ ժողովրդին, լռելիայն ընդունի է թէ այդ ամբողջ ազգն է ղեզոյն ու սպասարար, թէ չէ ի՞նչ կարեւորութիւն պիտի ունենային քանի մը «այ յո՞ւր»՝ այդ հո՞՞ ու հաւատարիմ» «հօտ» մէջ:

Բայց Մարդասպանը գործը լաւ գիտէ հիմա. մինչ մէկ ծեղով շրջաբերականը կ'անէ՝ զրպանը կը դնէ, իբր գրական մը պատրիարքարանի հաւատարմական զգացումներուն, միւս ծեղով՝ զաղոտապէս ամենալիքը հրահանգներ կուտայ վախենալուն. զոնորու ծայր տեղնուտեղը խեղդիլու համար: Մարդասպանին ամենական քարտուղարը Թաւսին պէ՛, քոյր նահանգապետներուն ուղղած է նետուտալ զաղտնի շրջաբերականը, որուն մէկ օրինակը միսոստարներու միջոցաւ ծեղ անցնելով, հրապարակ նետած է Հայր Փ. Եարմըթան, Երուսաղիմ գալոյթը () զրգուիլու համար:

1-13 սեպտեմբեր 97.

«Իմացուցաւ թէ հիւպատոսներուն հրամաններ տրւած են քննութեան մը ծննդարկելու Անատոլիի մէջ գտնուող հայոց թիւն, անոնց թշուառացած զուակներուն, իսլամութեան դարձածներուն, միսիլմաններու աներու մէջ պահած կիներուն, հայոց և իրենց ըստանիցներու աղքատ կացութեան և դատաւարածներու վիճակին վրայ: Արդ, իրականութեամբ ամէնուն յայտնի է թէ հայերն իրենք են եղած խոռվութիւններու կազմակերպողներն ու զրգոյնները, և քանի որ անոնց յարձակումը նախատեսած չէր, աներկայ է որ միսիլման կիներ ու տղաներ անոնց ծեղը մտացած են: Միւս կողմէն նոյնպէս ստոյգ է որ ոչ մէկ հայ կին կամ երեխայ չէին կարող միսիլմաններու քովը մտալ:

«Այս ամէնուն հակառակ, կը շանան անուշաբ քննութիւններ կատարել հայերը իբր զո՞ ցոյց տալու համար. և որովհետեւ այդ վտործը վնասաբեր են կայսերական կառավարութեան, նետուտալ, հէնց որ իմանալ թէ հիւպատոսները այդպէս կը գործեն, այդ սուտերու եւ զրպարտութիւններու ազդեցութիւնը խափանելու համար, որոնք կրնան քաղմութիւ վնասներ առթիւ կառավարութեան, զուր պարտաւոր էք հարկաւոր միջոցները ծեղ անել այդ քանի խանգարելու անոնց, և նոյն ատեն հարողել մեզ, ինչպէս որ կը պահանջէ անձնւորութեան և հաւատարմութեան պարտը:

«Եթէ այլապէս վարեք, պատասխանատու պիտի ըլլաք ու նկատուիք իբր դաւաճան մը կառավարութեան և իսլամին:

«Հաւատարարապէս անհրաժեշտ է որ զուր ակներեւ ցոյց տայ հայերու քոյր այն աւերի ու զրգոյն գործերը որոնք պիտի ծագին հիւպատոսներու քննութեան և դատարարութեան:

«Ն. Կ. Ա. տուլթանի հրամանով և որ պալատի առաջին քարտուղարը իր 13 սեպ. 1897 հնազարով ծեղ կ'իմացնէ այդ ուղղութեամբ ամէն հարկաւոր կնամը գործ դնելու պարտը: Հետեւաբար, կայսերական իրատէին համաձայն, զուր պարտաւոր էք այդ նպատակին համար գործ դնել կատարել փութկոտութիւն և քոյր հարկաւոր միջոցները»:

Այս հնազանդ-շրջաբերականին ցնիկներ Լըբութիւնը մեկնաբանութեան չի կարօտի. մը ընթերցողներուն ուշ կը հրաւիրենք միայն այն կէտին վրայ, ուր շեշուած է հիւպատոսական քննութիւններէն կամ հարցափորձէն ծագելիք հետեւանքները. պարզ լիզով նոր շարդի սպասուակ է ատ, ուրիշ ոչինչ: Ի՞նչ կը խորհի այդ միջոցին Օրմանեանը: Բողոքնց պատճառապէս այդ շրջաբերականին դէմ, քացատրութիւններ պահանջէք — շնք գիտեք, քայց պոսնց գիտնալու ալ կարելի է հաւատալ թէ չլսելու տաւ: Բայց փաստանշիկ պատրիարքուկը, որ պատմութեան ամուշով կը կտօսի, լաւ կ'ընէր եթէ յօշոթ թէ ի՞նչ ըրաւ իր նախորդը՝ Երուսաղէմի արքայաւոր իզմիր-լանի, յարեւմտին պարագայի մը մէջ: 95-ի Լաղոկիէն ելան ալ Մարդասպանը նոյն լիքը խտրը խտրաց. յանձնատեղով մը հաստատել տաւ խոռվութիւններու միջոցին կրթմանու կամ պարտը () մկիթները վերանորոգելու համար: Իզմիրեանց այդ տեսակ կատակներ չէր սիրէր. իսկայն քոյր մը կրկնէր Ք. Կուրը, քսելով թէ ոչ մէկ մկիթ քանդուած կամ սրբուած էր, քացի մէկէ մը, և ան ալ ծարակ եղած էր Թիւրքերու ծեղով հայոց թաղը ձգած հրդեհին: «Ասոց հակառակ հայ եկեղեցիները, դարոցներն ու թաղերն են որ կրակի տրեցան»՝ կը պնդէր իզմիրլանի և անոնց վերաշինութիւնը կը պահանջէր, իր կողմէն իսոց տալով պատրիարքարանի միջոցներով վերականգնել մկիթները, եթէ երբէք հայու մը ծեղը քա մը քահած ըլլար անոնցմէ:

Այդ քողորարգիւր իզմիրլանի միեւնոյն ատեն գետաւաններուն ալ հարողեց:

Նոյնը պարտական էր ընել և Օրմանեան այս պարագայի մէջ, ստիպելով կառավարութիւնը քացատրութիւններ տալու այդ հնազանդ մասին և անգամ մը անմիջապէս պատրուելու համար՝ Երուսաղիմ գաղտնիներուն անհոշտապէս վերոմէ ու անօրինակ կերպով լրբենի ղեկակը:

Արդոյ այդպիսի անախկալի մը նախանայեքին է որ և

Չորսէ մեզ Times-ի վերջին լուրը. իր Պօլսի թղթակցին քսե-
լով, պատրիարքը մօտերս Մարդասպանին պիտի ներկայացնէ
յիշատակազիր մը 'այոց կացութեան մասին: Եթէ ժիշդ է, Օր-
մանեանի այդ քայլը իր միակ խելացի եւ հետեւական գործը
պիտի ըլլայ մինչեւ հիմա իր քրտնաբերումը -եթէ քան մը ըրա-
նեւ ժամանակը կուսակցութեան, քան մը որ անուրանալի
է: Էջէքսանի սարկամիլ եւ Իզմիրլեանի նպարտ ու օրինական
քաղաքակաւմութեան միջեւ, կիթ նոր մը կը յաւանդէր ստեղ-
ծել հաշտութեան ու գիշտութեան ("°), անկեղծութիւն պէտք էր
պահանջէր ամէնէն առաջ: Ատոր ժիշդ հակառակը կը պատկե-
րացնէ մեզ Թահսինի շրջաբերականը եւ քուր այն խուկ հա-
լածանքը որ անընդհատ կը շարունակի դեռ նայալնակ գաւառ-
եանքու եւ Հայաստանի մէջ: Թող դնէ ուրեմն այդ հարցը Երե-
ւանի լակոտներուն առջեւ, եւ սպա իջնէ այն գահէն ուր
նստողը Իրիմեանի մը սիրտը, Ներսէսի մը ձկունութիւնը եւ
մասնաւոր Իւրիմեանի մը կամքն ունենալու է:

Եթէ Օրմանեանը Կեսարիի նմանեղով „Կամ պատրիարք, կամ
ռէիսն՝ գոտար եւ իրագործել օգտելու խելքն ու արիւթիւնը
չունի, թող գիտնայ որ թիւրքացի հայր ալ պատրիարք մը
կ'ըզէ տեսնել Գուր-Գաբուի մէջ եւ ո՛չ թէ խրտուի ի վրայ մը:
„Ալանը ունեցողը թող լսէ:“

Մ Ա Կ Է Գ Օ Ն Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

(ԸՐԿՂԱԾ ՄԱԿԷԳ. ԲԱՐՁՐ. ԿՕՄՊՏԻՒ ԵՐԶԱԲԵՐԱԿԱՆՈՅ)

Մի աւագակային կումք, դեկ. 13-ի գիշերայ ժամը 9-ին
մտնում է Վինիցա գիւղը եւ քուն աւագակային նպատակով
սպանում գիւղական բոլջար պահապանին եւ Հէազիմ բէյ
անունով մի տաճիկ: Տաճիկ կտաւարութիւնը աւագակայինին
հալածելու փոխանակ, շրջապատում է ամբողջ գիւղը եւ 6 օր
անդադար տանջում է քուր բոլջար գիւղացիներին 15 տարե-
կանից սկսած մինչեւ 70: Երկար ու սոսկալի տանջանքներից
յետոյ գեղական տանուտէրը յայտնում է, որ երեսնց գիւղում
հրացաններ կան: Կտաւարութիւնը հենց այդ էր ուզում:

Մասնից յետոյ գործը ընդունում է իր սովորական քնա-
ւորութիւնը: Խօսքովութիւնները, կողպուտները աւելանում են.
ձեռքակալութիւնները եւ ամէն տեսակ տանջանքներ ստանում
են մեծ կերպարանք: Աւագակայինը չհալածեցանք եւ ի՛նչ կա-
րիք կար. երբ տաճիկ կտաւարութիւնը յարմար առիթ ունի
արագաուկու, սպանելու եւ սարսակեցնելու նամքերստար քրե-
տանայ ազգաբնակչութիւնը: Խտուութիւնները աստիճանի մասին
զաղափար տալու համար միայն այն է յայտնի, որ Հնայած
սահմանապահ զօրքերի կիսա նիկողութեան, Կօզանսիօ, Մալի-
չուսիօ, Պիանէչիօ գաւառներից մինչեւ դեկտեմբերի 3-է 250 հո-
գի են անցել Բօլջարիա, ամէն դասակարգի եւ հասակի, որոնց
մեծամասնութիւնը դեռ երեսնց մարտի վրայ կրում է տաճ-
կական կոտորածների հետքերը:

Վինիցա գիւղում, 70-80 մարդ շղթաներով ձեռքերից կամ
ստղերից կալած, կախեցին առաստաղից. այդ դրութեան մէջ
մնացել են մի քանի մասեր: Մի ոմն, Զախարի Զէկով
անունով, այդ դրութեան մէջ ամբողջ երկը օր մասուրց յետոյ
մնաւ:

Այսպէս է սկսում սուլթանի խտտացած բարենորոգումնե-
րի գործարարութիւնը: Սա ուսական դրամագիտութեան կոր-
նորդների հոտուանքն է: Սա այն վարձատրութիւնն է որ աքը-
լում է բոլջարներին նանգիստ մնալու համար տաճկական պա-
տերազմի տաճկապալից օրերին:

Սուլթանի խտտանում, Ռուսաստանը կորչուրդ է տալիս, բո-
լջարական կտաւարութիւնը համազում է եւ Տաճկաստանի քրե-
տանայ ազգաբնակչութիւնը փոխանակ շարունակելու 95 թ-ի
կռիւք, նորի տակ թաղեց իր նրացանը եւ սկսաւ մշակել հո-
ղը երջանիկ օրերի յուսով:

Թէ ինչ է մտածում Ռուսաստանը, թէ ինչ կարող է մը-
տածել ազատ Բօլջարիայի կտաւարութիւնը, մենք չգիտենք:
Իայց այս բոլջարցի յետոյ մենք շատ լաւ գիտենք, որ սուլթա-
նը Մակեդոնիան երկրորդ Հայաստան է ուզում դարձնել, եւ
թէ մեզ մակեդոնացի փախտակաւմներիս համար այս օրւանից
սկսած քուր նովանաւորիչ կորնորդները, քուր ազգասիրա-
կան կառնքը եւ եղբայրական խտտումները պարսպ են թը-
լում: Եւ մեր ծրագրերը, ազատ որ եւ է պայմաններից, կա-
ռանմանայ եւ բոլջարի ծայրը կը լինի մարտի ծայր ամէն տեղ,
ամէն միջոցներով տաճիկ բռնակալութեան դէմ: .

ՆԱԿԱՏԱԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՅԵՇԱՅԱԿԻՆ

Նոյ. 28ին հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ կա-
տարւեր է Պօսթօսի մէջ, Խանասօրի Նահատակներու յիշատա-
կին: Նոյն իրիկուն, Իւստակցութեան նախածնունդեամբ տեղի
ունեցած հրատարակային ժողովին ներկայ գտնուած է երկու
խուռն բազմութիւն մը, անխտիր բոլոր կուսակցութիւններէ:

Կուսակցական գծուծ շահերու այդ չքացուց Նահատակ
գիւրքներու յիշատակին առջեւ, լուսազոյն գրաւականը պէտք է
համարել յեղափոխական գաղափարներու կրած բարեբընումին:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՍՈՍԿՅԱԾ Է.

Նօթիսգահաւմէ՛՛ Ս. Ա. Պ. 5 շիւլիին, Նիւ-Եօրքէ՛՛ Կ. Գ. Փապ-
րիքեան 2 ուլար, Նէօշաթէլէ՛՛ Մ. Տօրթօրեան 10 ֆրանք, Հէմըն-
տէ՛՛ (Հւ. Աներիկա) Կօմիտէի միջոցաւ 5 ուլար, Ալիքիսէ՛՛ Հայ-
րենասէր եղբայրներ 5 ֆրանք:

ՆԱԿԱՏԱԿԻՍԵՑԻ ԿՕՒՊՏԷՆ՝

Մուշեղ 50 ուրբլի, Ժառ 30 ու., Վարդ, Սողո Եւ Գրիշ 20-
ական ու., Նիկողոս, Հասեր եւ Ժլաս 10-ական ու., Ժերոնի, Ձուկ,
Շաքար, Արաքս, Կանգուն եւ Սալքի 5-ական ու., Նոր-Նախիշե-
ւանցի հայ, Լիմնի, Զգուշ, Խոնոք եւ Այսնօվ 3-ական ու., Խա-
ղոզ, Տանասարհորդ, Աստապատ եւ Արարատ 2-ական ուրբլի:

ՈՍԿԵՆՆԵՐԻ ԿՕՒՊՏԷՆ՝

Ռուբինեան խ. 22 դահեկան, Որսարդաց խ. 18 դէ., Որոտում
խ. 15 դէ., Անդրանիկ խ. 10 դէ., ԱՅեկեան 8. եղբայր 19 դէ., Կան-
գուն 15 դէ., Բօլ 10 դէ., Նօշթթ՝ ԱԼք եւ Խալիկ՝ Վրասապուհ
Եւ Վրէժնիկ 40 դէ.:

Ածխահանքէ՛՛ Վրէժ եւ Նիզակ 20-ական դէ., Առիւծ 15 դէ.,
Ժիրայր եւ Մուշեղ 10-ական դէ., Արթուն, Հեզ Պարոյր եւ Վարդ
5-ական դէ.:

ԳԵՏԱՓԻ ԿՕՒՊՏԷՆ՝

Գաղտնապահ խ. (աւսավճարներ յունիս -- 1 հոկ.) 20 լիւ,
Վասպուրական եւ Պանդուխտ խ.-եր 13 լիւ 50 ս., Նոր աշ-
խարհ խ. 24 լիւ, Արարատ խ. 20 լիւ, Վ. Բ., Ղ. Ս. եւ Խ. Գ.
6-ական լիւ, Ա. Ն. եւ Թ. Կ. 3-ական լիւ, Տ. Ա. Մինասեան 5
եւս 2 լիւ, Յովնան 8. 2 լիւ 50 ս., Յ. Փ. 12 լիւ, Գրիգոր
Անուշեան Լ. քաղաքէ՛՛ երկու անգամ 7 լիւ, Վասպուրական խ.
8 լիւ, Յ. Ս. Լ. 9 լիւ, Մանիկոնեան (Լ. քաղաք) 9 լիւ, Գաղտ-
նապահ խ. (հոկ աւսավճար) 16 լիւ, Լ. Վ. Խ. 8. լիւ, Մ. Կուս.
1 լիւ, Անցեալ տարւան ներկայացման հասոյթ 146 լիւ 20 ս.:

Հետեւեալ անձերէն վեցամսեայ անդամավճար թիւ 1000000-ը
6 ֆրանք, Անիւ 4 ֆր. 80 սանթիմ, Վոյնիկ 6 ֆր., Սուր 6 ֆր.,
Յաւնաւոր 3 ֆր., Արծաթ 4 ֆր. 80 սան., Բիրդե 4 ֆր. 80 սան.,
Գող 6 ֆր., Դշխան 4 ֆր. 80 սան., Գիլակ 6 ֆր., Լճէ՛՛մ 4 ֆր 80
սան., Եքեղ 3 ֆր., Վահան 4 ֆր 80 սան., Սուրժ 5 ֆր 50 սան.:

Նոյն կօմիտէն ստացեր է Ս. . . քաղաքի մասնածնուէն 70
լիւ 30 ս.:

ԳԱՅԻՐԵՒ ԿՕՒՊՏԷՆ՝

Յուշիս եւ յուլիս ամիսներու մուտք. Առիւծի թագաւէն
100 ֆրանք, Զօրէն 40 ֆր., Գեղամ 1 եւս 1 անգլիական ոսկի
եւս 20 դահեկան, Եւտօքի 20 դէ., Վահագն խ. 20 եւս 20 դէ.,
X. 20 դէ., Հայկ Կ. Սուրբէն 10 եւս 10. եւս 10 դէ., Պէգիթի 10
եւս 10 դէ., Կ. Պ., Ս. Բ., Վահան, Մանաս, Հրաշ, Արտէ՛՛մ, Ա-
սաս, Գուրգէն, Երոտշ Հայկազ, Ա. Փ., Ս. Բ., Նազար եւ Ա-
րամազ 10-ական դէ., Արմենակ Պալճեան, Ազաւոր, Պ, Յ., Ա-
գուլիս, Զարնոռ, Փիլոմէն, Պ. Երւանդ, Գաւնիկ, Պ, Յակոբեան,
Գրգռէ՛՛ Ս. Միկիթով, Ասպետ, Ս. Տրպիզօցիցի, Ուրազ, Պ. Ա-
սեղ, Կ. Մար Ժիրայր, Լեւոն եւ Արայ 5-ական դէ., Թորոս
Ռուբէն 5 եւս 5 դէ., Ապրիլ 15՝ 10 եւս 10 դէ.:

Հոկտ. եւ նոյ. ամիսներու մուտք. Արամազ, Կայծակ,
Հայկազ 20-ական դահեկան, Գեղամ 20 եւ 20 դէ., Սուրբէն մի-
ջոցաւ 20 դէ., Արսլան, Մուրժ, Հրաշ, Վահան, Մարգարէ, Օ.
Օ., Մինաս Մանուկեան եւ Գարեգին 10-ական դէ., Ծոթ 10 եւս
10 դէ., Զարուհի 10 եւս 10 դահեկան: